Մկրտիչ Արմեն

Կախարդական դղյակը

Մանուկ հասակում ո՞վ չի լսել ու կարդացել ժողովրդական չքնաղ հեքիաթներ, եւ հավատացել հեքիաթական աշխարհի իրական գոյությանը: Եվ ո՞վ չի ապրել դառը հիասթափություն, երբ մի օր, վաղ, թե ուշ, հասկացել է դրա անիրականությունը:

Բայց, հասկանում ես գլխով, իսկ ցանկանում՝ սրտով: Գիտակցելուց հետո անգամ, որ հեքիաթը՝ դա հեքիաթ է, ո՞վ չի ցանկացել գտնել այն եւ ո՞վ կամա թե ակամա, չի որոնել ամբողջ կյանքում…

Դրա համար չէ՞ արդյոք, որ նա, արդեն տարիքոտ մարդ, հուզումով վերակարդացել է իր մանկության գրքերը՝ վերադառնալու համար դեպի հեքիաթների չքնաղ աշխարհը…

Բայց մի մարդու, կալանավոր Բուկովին, երջանկություն էր վիճակվել տեսնել հեքիաթը սեփական աչքերով, իրականության մեջ…

Ռուսական հեքիաթ՝ խորհրդավոր անտառներով, դրանց խորքում թաքնված կախարդական դղյակով… Բուկովն ապրել էր այնտեղ մանուկ հասակում: Իսկ այժմ նա ապրում էր այն սարսափելի աշխարհում, որտեղ կյանքը նզովք էր, աշխատանքը՝ տառապանք, որտեղ, այդ մասին հոգացել էր հանճարեղ մի հեղինակ, չկար ոչ մի գեղեցիկ բան, ոչ մի, ոչ մի…

Մի անգամ, բարաքում պառկած, Բուկովը նայեց շուրջը եւ փնտրեց, թե կա՞ արդյոք այդտեղ որեւէ, գոնե փոքրիկ, գեղեցկություն: Չէ՞ որ վերջապես, թե՛

բարաքը եւ թե՛ դրա քնելատեղերը կառուցել էին մարդիկ: Մի՞թե նրանք չէին ջանացել դնել այդտեղ որեւէ գեղեցկություն…

Քնելատեղերը բարաքում երկհարկանի էին՝ ինչպես վագոններում: Պատկերացրեք երկու խաչ, մոտ երկու մետր հեռավորության վրա դեմ-դիմաց կանգնած: Դրանց թեւերի վրա ամրացված էին տախտակներ՝ վերին քնելատեղերը: Բայց խաչն ուներ նաեւ ցածրի թեւեր, որոնց վրա ամրացված էին ներքին քնելատեղերի տախտակները: Եվ պատկերացրեք այդպիսի կառուցվածքների ամբողջ շարքեր՝ բարաքով մեկ, արանքներում հազիվ անցնելու համար նեղ տարածություններով:

Ի՞նչ գեղեցկություն կարող էր լինել այդտեղ:

Բայց Բուկովը հանկարծ աշխուժացավ: Նրան թվաց, թե գտավ գեղեցկության մի նմուշ, ոչինչ, որ շատ փոքր…

Ոտնակողմի խաչի կես բարձրության վրա ամրացված էր տակդիր, որպեսզի վերին քնելատեղ բարձրանալիս կալանավորը, մի ոտքը ներքին քնելատեղի ծայրին դնելուց հետո մյուս ոտքը դներ դրա վրա: Եվ ահա, Բուկովին թվաց, թե բարաքի անծանոթ կառուցողն այդ տակրիդին տվել էր որոշ գեղեցկություն: Ոչ թե վերցրել էր պարզապես քառակողմ գերանակի մի կտոր եւ մեխել այնտեղ, այլ դրան տվել էր եռանկյուն ձեւ՝ աչքի համար ավելի հաճելի:

Վայ այն շրջապատին, որի միակ գեղեցկությունը տակդիրի մեջ է… Բայց մի որպե հետո Բուկովը հիասթափությամբ հասկացել էր, որ այդտեղ նույնպես չկար ոչ մի գեղեցկությամբ հասկացել էր, որ այդտեղ նույնպես չկար ոչ մի գեղեցկություն: Վերին քնելատեղ բարձրացողը կարող էր իր մյուս ոտքի ծունկը խփել քառակողմ գերանակի ներքեւի անկյունին եւ ցավեցնել: Ուստի եւ պետք էր կտրել այդ անկյունը, տալ տակդիրին եռանկյուն ձեւ: Մարդու մասին հոգատարության հարց չէր դա, ոչ: Կալանավորը կարող էր ուժգին ցավացնել ոտքը եւ անկարող դառնալ՝ դուրս գալու աշխատանքի…

Իսկ անծանոթ կառուցողը մեղադոր չէր: Գեղեցկության համար օրապահիկ չեն տալիս, հարկավոր էր կատարել հսկայական նորման…

Երբ նորից, ահա քանիերորդ անգամը լինելով, Բուկովին ասացին՝ «իրերդ հավաքիր», նա բոլորովին չցավեց, որ հեռանալու է իր այդ քնելատեղից, իր այդ բարաքից, իր այդ ճամբարից: Եվ չուրախացավ էլ, որովհետեւ փորձով գիտեր, որ նորից ընկնելու է մի այդպիսի ճամբար, մի այդպիսի բարաք, մի այդպիսի քնելատեղ, կատարելու է նույն ծառակտրումը կամ լուղարկում, կամ մի այլ աշխատանք՝ կապված փայտի հետ:

Երբ նրանք նորից մտան անտառ, նրան թվաց, թե անցնում են հարյուրավոր անգամներ ծանոթ նույն անտառով, զգվեցնելու աստիճան ծանոթ նույն ծառերի միջով, ոտքերի տակ ընկած է նույն ճահճոտ գետինը, որից քո ամեն քայլափոխին, ջուր է բխում եւ լցվում կեղեւատրեխներիդ մեջ…

Եվ հանկարծ Բուկովը նկատեց, որ իրական անտառն ընդհատվեց եւ սկսվեց հեքիաթական անտառը: Այնքան շեշտակի էին տարբերվում դրանք իրարից, որքան որ արթնությունը երազից, իրականությունը՝ հեքիաթից: Ծառերը դարձան շատ բարձր եւ ճյուղերից բոլորովին մաքուր՝ ինչպես կարմրավուն կեղեւով պատած սյուներ: Դրանց հեռու վերեւում սաղարթները կազմում էին անթափանց ծածկ, որտեղից ցած էր իջնում մի կանաչ, հեքիաթական կիսալույս:

Դա քարակած անտառ էր: Ոչ մի ճյուղ չէր շարժվում այնտեղ, չէր լսվում ոչ մի հնչյուն: Թե պահակները, թե կալանավորները, կարծես երկյուղած, նույնպես լռեցին եւ աշխատեցին չքստքստացնել ոտքերը արդեն չոր գետնի վրա:

Որքան ավելի էր գնում կալանավորների խումբը, այնքան ավելի էր անտառը դառնում մութ: Նրանք չէին ընթանում առաջ, նրանք ետ էին գնում դեպի մանկության հեքիաթների աշխարհը: Շո՞ւտ կհանդիպեն արդյոք հավի ոտքերի վրա կանգնած խրճիթը, ջադու պառավը, հեծյալ դյուցազնը, մարդկային լեզվով խոսող գայլը, անտառում մոլորված գեղեցիկ աղջիկը, չնաշխարհիկ դղյակը…

Ժամեր շարունակ գնացին նրանք այդ մութ անտառով, մինչեւ որ նորից դարձավ լուսավոր: Բայց այժմ լույսը ոչ թե կանաչ էր՝ վերեւից ընկնող, այլ սովորական, որ գալիս էր առջեւից: Մի՞թե հեքիաթն ավարտվում էր այնտեղ…

Կալանավորները դուրս ելան անտառից, բայց հեքիաթը չընդհատվեց, ոչ:

Աջ թեւի վրա եւ դիմացը անտառը շարունակվում էր նույնքան ստվերախիտ ու բարձր: Բայց ձախ թեւի վրա կանգնած էր մի երկարավուն եւ բարձր բլուր՝ ծառերից զուրկ: Դրա դիք լանջի վրա միայն խոտեր էին ու թփեր եւ երբեմն-երբեմն էլ ցածրիկ ու նիհարիկ տունկեր:

Բլուրի գագաթին, որտեղ պետք է լիներ հեքիաթական ամրոց, ձգվում էր ճամբարի տախտակե խուլ պարիսպը: Կալանավորներն հենց այդպես էլ ընկալեցին այդ պարիսպը՝ հեքիաթական ամրոցի պատ…

Սկսեցին մագլցել դիք լանջն ի վեր: Կառչում էին խոտերից ու թփերից, երբեմն ետ սահում եւ բռնում տունկերը, կանգ առնում եւ նորից շարունակում բարձրանալ: Նրանք չէին զգում վերելքի դժվարությունը: Նրանք շտապում էին հասնել հեքիաթական ամրոց…

Բլուրի բարձրից նրանք նայեցին ներքեւ: Եվ, չնայած, որ գտնվում էին այդքան բարձր, չտեսան ներքեւում ոչինչ՝ բացի անտառից եւ անտառից: Անմիջապես բլուրի ցածրում այդ անտառի եզրն էր՝ խիտ ծառերի տակ թանձրացած մթությամբ…

Դարպասը ճռնչաց՝ ինչպես հեքիաթի մեջ, եւ նրանք մտան ներս: Դարպասը նորից ճռնչաց, փակվեց, որից հետո ամեն ինչ դարձյալ նույնն էր՝ ինչպես բոլոր ճամբարներում:

Բայց նո՞ւյնն էր արդյոք: Գեղեցկությունից եւ տարրական հարմարություններից միանգամայն զուրկ, այդ ճամբարը, այնուամենայնիվ, գտնվում էր հեքիաթական աշխարհում: Կալանավորները դեռ համակված էին շրջապատի անտառի գեղեցկության թովչանքով:

Նրանք առիթ չունեցան արթնանալու այդ հաճելի թովչանքից: Հենց որ առավոտները, վեր կենալով իրենց չոր տախտակների վրայից եւ ստանալով իրենց ջրալի նախաճաշը, արդեն զգում էին տհաճ իրականության առաջխաղացումն իրենց վրա, նրանց հանում էին աշխատանքի, եւ հեքիաթը նորից կլանում էր նրանց:

Չի կարելի ասել, թե հեշտ էր այդ աշխատանքը: Կալանավորներն իջնում էին բլուրից, վերադառնում իրենց եկած ճանապարհով որոշ տեղ, թեքվում եւ դուրս էին գալիս ինչ-որ երկար, շատ երկար բացատ՝ անտառի խտության մեջ սեղմված: Կատարում էին այնտեղ հողային աշխատանքներ՝ ապագա նեղգիծ երկաթուղու համար:

Բոլորն ամբողջ օրը լուռ էին՝ ինչպես հավատացյալները եկեղեցում: Հեքիաթական միջավայրից ակնածած, նրանք մինչեւ իսկ շարժվում էին որպես հեքիաթական էակներ: Չէին զգում աշխատանքի դժվարությունն այնպես, ինչպես ուրիշ տեղ՝ իրականության մեջ: Այնուամենայնիվ, ինչպիսի՜ զորավոր ուժ է գեղեցկությունը…

Եվ կալանավորները վերադառնում էին իրենց հեքիաթական ամրոցը՝ հեքիաթից մշուշված աչքերով, եւ չէին նկատում ո՛չ ճաշի ջրալիությունը, ո՛չ տախտակների չորությունը այնպես, ինչպես ուրիշ տեղ՝ իրականության մեջ: Գուցե աշխարհում դեռ չէր եղել այդպիսի խաղաղ ու լուռ ճամբար, որտեղ մարդիկ մինչեւ իսկ քայլեին հուշիկ քայլերով…

Առաջին իսկ օրը Բուկովը նկատել էր, որ ճամբարը շրջապատող տախտակե պարիսպն ուներ ոչ միայն դարպաս, այլեւ, հակադիր կողմում, մի շատ փոքրիկ, խուլ դռնակ: Ո՞ւր էր տանում այդ դռնակը… Բարձր պարիսպի ետեւում չէր երեւում ոչինչ՝ բացի երկնքից՝ տարվա այդ եղանակին զարմանալիորեն անամպ եւ կապույտ:

Մի անգամ խոհարարն ասաց Բուկովին .

Գնա ջուր բեր խոհանոցի համար: Այսօրվանից դուք կբերեք ջուրը, հերթով:

Եվ տվեց նրան երկու դույլ ու մի բանալի…

Բանալի… Բուկովի սիրտը թպրտաց: Դա այն դռնակինն էր, որը բացվում էր դեպի անհայտություն… Ինչո՞ւ ամեն մի փակ դռան ետեւում մենք պատկերացնում ենք միայն լավը, հրապուրիչը… Ինչո՞ւ անհայտությունը մեզ համար չունի երկու երանգ, այլ միայն մեկը՝ վարդագույն…

Թեեւ ուշ ժամ էր, եւ կալանավորներն արդեն վերադարձել էին աշխատանքից, բայց ո՞ւշ ժամ էր իրոք: Արեւը փայլում էր ինչպես ցերեկը, եւ փայլելու էր նաեւ համարյա ամբողջ սպիտակ գիշերը: Գիշեր չկար, մշտնվենական ցերեկ էր: Դա էլ էր հեքիաթային…

Բաց անելով ժանգոտ կողպեքը, Բուկովը ելավ դուրս եւ քարացավ մնաց իր առջեւ բացված հեքիաթից…

Բլուրն այդ կողմում բլուր չէր եւ չուներ դեպի վար տանող լանջ: Այդտեղ տարածված էր ընդարձակ հարթավայր: Ճամբարի պատից մի քանի քայլ այն կողմ, պատին զուգահեռ, հոսում էր, ոչ, չէր հոսում, այլ քարացել էր, մի նեղ առվակ, ափերին երկու շարք ստվերախիտ ծառեր: Կարծես նեղ անտառի մի մութ շերտ էր անցնում այդտեղով՝ ճեղքելով արեւոտ ընդարձակությունը:

Տեղ-տեղ մի ցատկումով կարելի էր անցնել առվակի մյուս ափը: Այնտեղ, մինչեւ մոտակա հորիզոնը, փռված էր արեւով ողողված ընդարձակ մարգագետինը՝ լի ծաղիկներով ու խոտերով…

Աջում անտառը հեռու էր: Իսկ ձախում կանգնած էր շատ մոտիկ, ուղղաձիգ պատի պես: Արեւոտ մարգագետնի վրա չէր ընկել դրա ստվերի ոչ մի պատառ, իսկ մարգագետնից անտառ չէր թափանցել արեւի ոչ մի բիծ: Իրարից կտրուկ սահմանագծված, կողք-կողքի ապրում էին ծաղկազարդ մարգագետինն ու անտառը: Եվ այնտեղ, անտառի ուղղակի եզրին, թանձր ստվերի մեջ, կանգնել էր կախարդական դղյակը…

Մեծ չէր դղյակը: Միհարկանի էր, ռուսական փայտաշեն սքանչելի դղյակ՝ կտուրի վրա ձող եւ ձողի վրա աքաղաղ: Քիվերը՝ փայտե կանաչ ժանյակներ: Լուսամուտների շուրջը՝ փայտե կարմիր ժանյակներ: Ապակիների ետեւում՝ ձյունասպիտակ վարագույրներ: Իսկ դուռ չկար: Դա, անշուշտ, ետեւի կողմումն էր՝ անտառում…

Շա՞տ էր կանգնել Բուկովը նայելով կախարդական դղյակին, թե ոչ, բայց նա, վերջապես, սթափվեց եւ մոտեցավ առվակին՝ ջուր վերցնելու: Երբ դույլերը անշարժ ջրի հայելու մեջ սուզելուց հետո փարձրացրեց՝ նա սարսռաց այն

շառաչից, որն արձակեց ավելորդ ջուրը՝ դույլի պատերով վերադառնալով դեպի առվակ: Նոր միայն Բուկովն զգաց շրջապատի լռության հեքիաթական բացարձակությունը:

Նա ջուրը բերեց խոհանոց, դատարկեց, էլի բերեց, էլի, էլի, եւ երբ խոհարարն ասաց՝ «բավական է, փակիր դուռը եւ եկ», նա հազիվ չաղերսեց՝ «թույլ տուր էլի բերեմ, գոնե մի անգամ եւս»…

Հանձնելով բանալին խոհարարին, նա պատրաստակամություն հայտնեց .

Վաղը նույնպես ես կբերեմ ջուրը…

Է՛, ոչ, մերժեց խոհարարը, ուրիշներն էլ են ուզում լրացուցիչ ճաշ ստանալ ջուր բերելու համար:

Լրացուցիչ ճաշը տուր ուրիշներին, համաձայնվեց Բուկովը, իսկ ջուրը կբերեմ ես: Վաղը եւ ամեն օր…

Հասկացա՞վ խոհարարը կալանավորին, թե՞ դրաց նրան խելագարի տեղ: Գուցե չմտածեց էլ այդ մասին: Նրա համար միեւնույնն էր: Նա համաձայնվեց:

Երանի նրան, ով ոչ թե մանկական գրքույկի կողն է բաց անում՝ հեքիաթ մտնելու համար, այլ իրականության սահմանի դռնակը… Եթե հեքիաթ էր ճամբարի ամբողջ շրջապատը, ապա դռնակից այն կողմի աշխարհը հեքիաթ էր հեքիաթի մեջ: Վաղ առավոտից մինչեւ աշխատանքի վերջը Բուկովը երազում էր այն պահի մասին, երբ բաց կանի ժանգոտ կողպեքը եւ դուրս կգա դեպի հեքիաթական, արեւոտ, ընդարձակ մարգագետինը, կախարդական դղյակը՝ խորհրդավոր անտառի եզրին, ստվերի մեջ…

Մի օր, երբ Բուկովը եկավ, որպեսզի տանի այդ օրվա վերջին երկու դույլ ջուրը, կախարդական դղյակի ետնակողմից հայտնվեց մի երիտասարդ կին՝ ձեռքին մի դույլ: Նա դուրս եկավ իր ստվերոտ անտառից եւ եռանկյուն կտրելով արեւոտ մարգագետինը, սկսեց մոտենալ առվակի այն տեղին, որտեղից հարմար էր ջուր վերցնելը:

Վերջապես… Վերջապես հայտնվեց նա, առանց որի դատարկ է որեւէ կախարդական դղյակ, որեւէ հեքիաթ…

Երիտասարդ կինն իր մերկ սրունքներով ու ծնկներով շոյելով ծաղիկներն ու խոտերը, սկսեց մոտենալ: Այժմ Բուկովը կարողանում էր արդեն զանազանել նրա դեմքը:

Իհարկե, նա գալիս էր հեքիաթից՝ ինքը հեքիաթի պես գունագեղ: Նրա մազերը ոսկեգույն էին, աչքերը՝ երկնագույն, շրթունքները՝ վառ-կարմրագույն: Նա հագել էր կարմիր սարաֆան, լայն թեւքերով սպիտակ կոֆտա՝ ամբողջապես ասեղնագործված սեւ եւ կարմիր թելերով:

Կալանավորն ու գեղեցկուհին հայտնվեցին դեմ-դիմաց՝ ինչպես իրականությունը հեքիաթի հետ: Երիտասարդ կինը նայեց տղամարդու աչքերի մեջ՝ լուռ, երկար, եւ ոչինչ չասաց: Ապա, դանդաղ խոնարհվելով, իր դույլը սուզեց քարացած ջրի անշարժության մեջ: Երբ քաշեց վեր, երկուսն էլ սթափվեցին ջրի շառաչից: Երիտասարդ կինը մի անգամ եւս նայեց տղամարդու աչքերին եւ, շուռ գալով, կտրեց արեւոտ մարգագետինը՝ նույն եռանկյուն ճանապարհով, գնաց, գնաց, հասավ իր անտառին, մտավ ստվեցի մեջ եւ, այլեւս առանց ետ նայելու, անհետացավ կախարդական դղյակի ետեւում…

Բուկովը կտրեց իր հայացքն այնտեղից, նայեց ոտքերի տակ, նեղլիկ առվակին, որի վրայով կարելի էր մի ցատկումով անցնել այն կողմ: Բայց այդ մի ցատկումն արգելված էր կալանավորի համար: Նեղլիկ առվակը սահմանագիծ էր ճամբարի իրականության եւ հեքիաթի միջեւ…

Բուկովը լցրեց իր դույլերը, վերադարձավ ճամբար: Մտնելով ներս, նա վրա բերեց դռնակը եւ ժանգոտ բանալիով կողպեց հեքիաթը: